http://doi.org/10.53587/25792865-2024.11-95

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ՝ ՈՐՊԵՍ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Մամիկոնյան Կ.Հ., Փիլոյան Ա.Ս.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշման մեթոդաբանությունը համապատասխան ոլորտային գիտամեթոդական մշակումներում այդքան էլ հստակեցված կերպով չի ներկայացվում: Այդ նպատակով կատարվող հետազոտությունների ընթացքում ծագում են բազմապիսի հարցեր, որոնք հիմնականում բխում են տվյալ ակտիվների ոչ նյութական լինելու բնույթից:

Սույն հոդվածում առաջարկվել է դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում համակարգչային ծրագրերի արժեքի որոշման մեթոդաբանական մոտեցում: Վերջինիս համաձայն համակարգչային ծրագրի շուկայական արժեքի որոշման մեթոդի ընտրության պարագայում պետք է դիտարկել, ըստ ամենայնի, եկամտային մոտեցման շրջանակներում կիրառվող «ինքնարժեքում շահում» մեթոդը, այնուհետև իրականացնել ինքնարժեքում շահումից ստացվող ապագա եկամտի հոսքի ներկա արժեքի բերման հաշվարկ՝ կումուլյատիվ մեթոդով ստացված զեղչման դրույքի օգնությամբ:

Հոդվածում հիմնավորվում է նաև, որ նշված մեթոդների համակցության միջոցով իրականացվող ոչ նյութական ակտիվի գնահատման դեպքում հաշվի են առնվում համակարգչային ծրագրի օգտագործմամբ ապագա ժամանակահատվածում կանխատեսվող եկամուտների ձևավորման հնարավորությունները և կումուլյատիվ մեթոդի միջոցով համակարգված մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը, ինչն առավելագույն կերպով նեղացնում է ոչ նյութական ակտիվի կողմից գեներացվող եկամուտների կանխատեսումների շրջանակը՝ նրա իրական արժեքին հանգելու հաշվարկներ կատարելիս:

Բանալի բառեր. *դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննություն, ոչ նյութական ակտիվ, համակարգչային ծրագիր, դիսկոնտավորում, եկամտային մոտեցում, կումուլյատիվ մեթոդ,ինքնարժեքում շահում:*

Թղթակցական հասցեն՝ Մամիկոնյան Կարեն Հովհաննեսի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ, տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների բաժնի փորձագետ: e-mail: mamikonyankaren@gmail.com

Համակարգչային ծրագրերը պատկանում են ոչ նյութական ակտիվների դասին, որոնք, ներկայանալով որպես ֆիզիկապես չարտահայտվող ռեսուրս և չունենալով շոշափելի ձև, զգալիորեն նպաստում են ընկերության արժեքին՝ ընդգրկելով ծրագրային ապահովման արտադրանքների և տեխնոլոգիաների լայն շրջանակ:

Ոչ նյութական ակտիվներին անդրադառնալով՝ հարկ է նշել, որ դրանց շարքին են դասվում տնտեսական գործունեության մեջ երկար ժամանակահատվածում օգտագործվող և եկամուտ բերող իրավունքները, որոնք բխում են՝

ա) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների, համակարգչային ծրագրերի, տվյալների բազայի և հեղինակային ու այլ պայմանագրերից,

բ) հայտնագործություններից, արդյունաբերական նմուշներից, ապրանքային նշաններից, ֆիրմայի անվանման վկայագրերից և դրանց օգտագործման արտոնագրային պայմանագրերից,

գ) «նոու-հաու» իրավունքից և այլն:

Ոչ նյութական ակտիվի արժեքն ածանցվում է դրա ոչ նյութական բնույթից [1, էջ՝ 784]: Այս կանխադրույթի զարգացմանը կարելի է նաև վկայակոչել «Ոչ նյութական ակտիվներ» Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 38-ի 17-րդ կետի դրույթը. «*Ոչ նյութական ակտիվից առաջացող ապագա տնտեսական օգուտները կարող են ներառել* ***ապրանքների կամ ծառայությունների իրացումից հասույթի, ծախսումների տնտեսման կամ այլ օգուտների տեսքով****, որոնք առաջանում են կազմակերպության կողմից այդ ակտիվի օգտագործման արդյունքում: Օրինակ՝ արտադրական գործընթացում մտավոր սեփականության օգտագործումը կարող է հանգեցնել ապագա արտադրական ծախսումների կրճատմանը, այլ ոչ թե ապագա հասույթների ավելացմանը:*» [2, կետ 17]:

Համաձայն նույն ստանդարտի 21-րդ կետի՝ «*Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ՝ ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն. բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել*»:

Համաձայն ՀՀ կառավարության 24.08.2022թ.-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված Գնահատման ընդհանուր ստանդարտի 8-րդ կետի «*Ոչ նյութական ակտիվները չեն պատկանում անշարժ գույք համարվող ակտիվների շարքին, սակայն ոչ նյութական ակտիվները կարող են փոխկապակցված լինել անշարժ գույքի հետ և էական ազդեցություն ունենալ արժեքի վրա*» [3]:

Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքը գնահատելու համար ընդհանուր ընդունված մոտեցումներից (ծախսային, համեմատական, եկամտային) առավել հարմար է եկամտային մոտեցումը, քանի որ մտավոր սեփականության օբյեկտների (ՄՍՕ) օգտագործումից ստացված եկամուտն է առավելագույն կերպով որոշում դրա արժեքը:

Ինչպես հայտնի է, ընկերություններից պահանջվում է իր ֆինանսական հաշվետվություններում բացահայտել ոչ նյութական ակտիվների ձեռքբերման, վերագինման և ամորտիզացիայի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Այս

նպատակով օգտագործվում են նաև քանակական և որակական գնահատման տեխնիկական համադրություններ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են եկամուտների կանխատեսումները և զեղչման դրույքաչափերը:

Համակարգչային ծրագրերի գնահատումը եզակի մարտահրավերներ է ներկայացնում թվային լանդշաֆտի դինամիկ բնույթին՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով: Ապագա տնտեսական օգուտների ճշգրիտ կանխատեսումը դժվար է, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են շուկայի պահանջարկը, մրցակցային ճնշումը և տեխնոլոգիապես հնացումը:

Որոշ ոչ նյութական ակտիվներ կարող են պարունակվել ֆիզիկական սուբստանցիայի մեջ կամ դրա վրա: Կազմակերպությունը պետք է դատողություններ անի՝ գնահատելու համար, թե որ տարրն է առավել նշանակալի: Օրինակ՝ համակարգչով կառավարվող հաստոցի համար նախատեսված համակարգչային ծրագիրը, առանց որի այդ հաստոցը չի կարող աշխատել, կազմում է հաստոցի անբաժանելի մասը և դիտարկվում է որպես հիմնական միջոց: Նույն մոտեցումը կիրառվում է համակարգչի օպերացիոն համակարգի համար: Երբ ծրագիրը համակարգչի անբաժանելի մաս չի կազմում, ապա համակարգչային ծրագիրը դիտարկվում է որպես ոչ նյութական ակտիվ [2, կետ 4]:

Համակարգչային ծրագրի գնահատումն անհրաժեշտ է, երբ կազմակերպությունում իրականացվում են հետևյալ գործընթացներից որևէ մեկը.

– կազմակերպության հիմնադրման կամ մասնակցության ժամանակ համակարգչային ծրագրի արժեքի չափով ներդրում կազմակերպության կանոնադրական կապիտալ՝ բաժնեմասերի կամ բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով,

– ստեղծված կամ ձեռքբերված համակարգչային ծրագրի արժեքի ներմուծում կազմակերպության հաշվեկշիռ,

– համակարգչային ծրագրի եփականատեր կազմակերպության ոչ նյութական ակտիվների վերագնահատում,

– համակարգչային ծրագիր ունեցող կազմակերպության ընդհանուր շուկայական արժեքի որոշում,

– համակարգչային ծրագրի հեղինակների վարձատրության որոշում,

– լիցենզային պայմանագրի գնի որոշում, որի առարկան համակարգչային ծրագիրն է,

– համակարգչային ծրագրի սեփականատիրոջ բացառիկ իրավունքների խախտմամբ պատճառված վնասի չափի որոշում,

– համակարգչային ծրագրերի ապահովագրություն,

– համակարգչային ծրագրի սեփականատեր կազմակերպության վերակազմակերպում,

– բիզնես պլանի մշակման շրջանակներում համակարգչային ծրագրի օգտագործմամբ տնտեսական արդյունավետության որոշում,

– համակարգչային ծրագրերի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հետ կապված այլ գործառնություններ[a]:

Ոչ նյութական ակտիվների արժեքի ճշգրիտ հաշվարկը բարդ գործընթաց է, որը բացատրվում է գնահատման օբյեկտի բացառիկությամբ և յուրաքանչյուր կոնկրետ բիզնեսում դրա կիրառման յուրահատկությամբ: Օրինակ, նույն ակտիվները՝ արդյունաբերական նմուշը, հայտնագործությունը, տեղեկատվական տեխնոլոգիան կամ համակարգչային ծրագիրը, որոնք օգտագործվում են տարբեր ընկերություններում, իրենց սեփականատիրոջը տարբեր եկամուտներ կարող են ապահովել:

Համակարգչային ծրագրի արժեքի որոշման համար նախ անհրաժեշտ է ունենալ հետևյալ տեղեկատվությունը.

– համակարգչային ծրագրի օգտագործման նպատակը, կիրառման վերաբերյալ գրանցված փաստաթղթերը,

– օգտագործման լիցենզային պայմանագիրը

– համակարգչային ծրագրի նկարագրությունը՝ ծավալը, ծրագրավորման լեզուն, հարթակը, մասշտաբայնությունը (օգտատերերի քանակը),

– համակարգչային ծրագրի կիրառմամբ արտադրանքի հիմնական պլանային ցուցանիշները,

– համակարգչային ծրագրի օգտագործման ժամանակահատվածի համար պլանավորվող համախառն եկամուտը, ձեռնարկատիրական գործունեության գծով վճարվող հարկերը և այլն,

– մնացորդային հաշվեկշռային արժեքը:

Իրականում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետությունը և դրանց ներդրման արդյունքները գնահատելն ակնհայտ դժվարություններ է ներկայացնում: Վերջիններս գնահատելիս սխալները նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության գործունեության, գնահատման առարկայի և շուկայի մանրակրկիտ և խորը վերլուծություն:

Ինչ վերաբերում է գնահատման հայտնի մոտեցումներից որևէ մեկի կիրառման նպատակահարմարությանը, ապա պետք է նշել, որ նշվածը հիմնականում կախված է գնահատողին հասանելի տեղեկատվության առկայությունից, ինչպես նաև նրա առջև դրված խնդիրների բնույթից:

Շուկայական մոտեցումը ներառում է շուկայում նմանատիպ ծրագրերի համեմատություն՝ համադրելի վաճառքի կամ լիցենզավորման համաձայնագրերի հիման վրա գնահատում ստանալու համար: Սակայն շուկայական կամ համեմատական մոտեցումը գործնականում չի կիրառվում, քանի որ նմանատիպ տեխնոլոգիական ընկերությունների արժեքը կարող է տասնյակ անգամ տարբերվել: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ոչ նյութական ակտիվների տեսակավորված շուկաներ ՀՀ-ում դեռևս չեն ձևավորվել:

[a] URL: https://zuykov.com/about/articles/otsenka-nematerialnikh-aktivov-chto-eto-takoe-i-dlya-chego-eto-nuzhno/.

Ծախսային մոտեցմամբ գնահատվում է ծրագրի ստեղծման, մշակման կամ ձեռքբերման հետ կապված ծախսերը, ներառյալ՝ հետազոտությունների և զարգացման հետ կապված ծախսերը:

Սովորաբար տեղեկատվական տեխնոլոգիայի արդյունավետությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ ծախսերը.

1. Ծրագրային ծախսեր. համակարգչային սարքավորումներ և ծրագրային ապահովում, սերվերի ապարատային և ծրագրային ապահովում, ցանցային սարքավորումներ և ծրագրակազմ, տեղադրում, ինտեգրում, կապալառուների ծառայությունների վճարում, երաշխիքի և սպասարկման ծախսեր, լիցենզիա, անցումային գործընթացների, ռիսկերի նվազեցման ծախսերը:
2. Գործառնական. էլեկտրաէներգիայի վրա ծախսվող ռեսուրսներ (սարքավորումներ, պահեստային հզորություն, օդորակիչ), համակարգի ենթակառուցվածք, սովորական սպասարկում, անվտանգություն, համակարգի հասանելիության և կատարողականի բարձրացում, համակարգի վերականգնման և կրկնօրինակման ծախսեր, արտաքին և ներքին աուդիտ, անսարքությունների վերացում, օգտագործողների և մասնագետների վերապատրաստում, սարքավորումների փոխարինում, մասշտաբավորում և արդիականացում, խորհրդատվական ծառայություններ, համակարգի ապամոնտաժում և այլն:
3. Այլ ծախսեր. մարքեթինգային հետազոտությունների, անբարեխիղճ մրցակցության հաղթահարման և այլ ծախսեր[b]:

Եկամտային մոտեցումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ ակտիվի արժեքը կախված է նրա եկամուտ ստեղծելու կարողությունից: Այս մոտեցումը գնահատում է համակարգչային ծրագրի կողմից առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ եկամուտների կանխատեսման միջոցով:

Ընդհանուր առմամբ, հաճախորդների բազայի որակը, քանակը, բնութագրերը, հետագա համագործակցության հնարավորությունները, վճարումների հուսալիությունը և կայունությունը կարևոր ցուցանիշներ են համակարգչային ծրագրի սեփականատեր համարվող տեխնոլոգիական ընկերության ապագա եկամուտները պլանավորելու համար: Ֆրանչայզերի դեպքում ցույց է տրվում, որ նույնիսկ առանց շահույթի ընկերությունը կարող է արժեք ունենալ տարբեր առավելությունների շնորհիվ, դրանք են, օրինակ՝ հավատարիմ հաճախորդների շրջանակը, ոլորտին հատուկ տրված լուծումները, շրջանառության կտրուկ աճը, շուկայի հատվածի տպավորիչ մասի տիրապետումը և այլն:

Համակարգչային ծրագրի շուկայական արժեքի որոշման մեթոդաբանության ընտրության դեպքում պետք է դիտարկել, ըստ ամենայնի, եկամտային մոտեցման շրջանակներում կիրառվող «ինքնարժեքում շահում» (profit in cost) մեթոդը, որի կիրառման պարագայում մտավոր սեփականության օբյեկտը թույլ է տալիս տնտեսել և շահել արտադրական կամ վարչական ծախսերի գծով [4, էջեր՝ 124-125]:

[b] URL: https://habr.com/ru/articles/713998/.

«Ինքնարժեքում շահում» մեթոդը կարող է որոշ իրադրություններում կիրառվել նաև ծախսային մոտեցման շրջանակներում: Սա գնահատման մեթոդ է, որը թույլ է տալիս գնահատել ընկերության ստացված եկամտի աճը՝ ոչ նյութական ակտիվների օգտագործման հաշվին [5]: «Ինքնարժեքում շահում» մեթոդն օգտագործվում է հիմնականում արդյունաբերական սեփականության, ծառայությունների ոլորտի, նոու-հաուի և ծրագրային ապահովման արտադրանքի արժեքի որոշման նպատակով: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ մտավոր սեփականության օբյեկտի օգտագործումից տնտեսումը (եկամուտը) իրենից ներկայացնում է վաճառքի ենթակա ապրանքների կամ մատուցվող ծառայությունների ինքնարժեքում շահում, այսինքն՝ ինքնարժեքի նվազեցում [6, էջեր՝ 84-85]: Մտավոր սեփականության արժեքը սահմանվում է որպես դրա օգտագործման արդյունքում արտադրության, վերավաճառքի, աշխատանքների կատարման ընթացքում առաջացող ծախսերի խնայողություն: Ինքնարժեքում շահումը արձանագրվում է այն ժամանակ, երբ մտավոր սեփականության օբյեկտը բերում է օգտավետ էֆեկտ, այսինքն՝ ինքնարժեքում ամփոփված ծախսերն ավելի քիչ են հաշվարկվում: «Ինքնարժեքում շահում» մեթոդով որոշվում է, որպես կանոն, համեմատական կամ նմանատիպ ապրանքների արտադրության կամ վաճառքի, ինչպես նաև ծառայությունների մատուցման նպատակով կատարվող աշխատանքների՝ դրանց նախկինում առանց մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման կատարված հաշվարկային ծախսերի համեմատությամբ տնտեսման (եկամտի) չափը:

«Ինքնարժեքում շահում» մեթոդի համար էական են հետևյալ ծախսային հոդվածների հետ կատարվող ֆինանսական հաշվարկները և դրանց հիման վրա իրականացվող վերլուծությունները.

- ՄՄՕ-ի օգտագործման դեպքում նյութերի տնտեսման հաշվարկ,
- ՄՄՕ-ի օգտագործման դեպքում աշխատուժի ծախսերի տնտեսման հաշվարկ,
- ոչ արտադրական ծախսերի տնտեսման հաշվարկ,
- ընդհանուր ինքնարժեքում շահումի հաշվարկ,
- ինքնարժեքում շահումից ստացվող ապագա եկամտի հոսքի ներկա արժեքի բերման հաշվարկ՝ զեղչման դրույքի միջոցով, կախված այն բանից, թե ենթադրվո՞ւմ է արդյոք, որ այս եկամուտները հաստատուն են, կամ եթե դրանք փոփոխուն են, ապա ժամանակի ընթացքում ի՞նչ միջինացված ցուցանիշներ են արձանագրվում:

Ակտիվ շուկայում, որտեղ գները որոշվում են առաջարկի և պահանջարկի հիման վրա, գործարքներն իրականացվում են բավականին հաճախ՝ առանց հարկադրանքի, իսկ ներգրավված կողմերը կախված չեն միմյանցից: Ելնելով ոչ նյութական ակտիվների յուրահատկությունից՝ պետք է ընդունել, որ գործնականում դրանց համար չկա ակտիվ շուկա: Այդուհանդերձ, իրական արժեքի ցուցիչներից մեկը կարող է համարվել կանխատեսվող եկամուտների զեղչված արժեքը:

Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի ներկա արժեքն առաջարկվում է հաշվարկվել հետևյալ զեղչման (դիսկոնտավորման) բանաձևի օգնությամբ.

$$PV = \sum_{t=1}^{T} \frac{\Delta n_t}{(1+r)^t}, \quad (1)$$

որտեղ՝

PV - ՄՄՕ-ի ներկա (զեղչված) արժեքն է,

T - ծրագրի օգտակար օգտագործման ժամանակահատվածը,

Δn_t - ծրագրի օգտագործման արդյունքում ինքնարժեքում շահումի չափը *t* ժամանակահատվածում,

r - դիկոնտավորման դրույքը [7]:

Ինչ վերաբերում է ոչ նյութական ակտիվների գնահատման դեպքում դիսկոնտավորման դրույքի ոչ ստանդարտ հաշվարկներին, ապա առաջարկվում է կիրառել կումուլյատիվ կառուցման մոդելը:

Կումուլյատիվ (կուտակային, միագումարային) կառուցման մոդելը դիսկոնտավորման (զեղչման) դրույքաչափի որոշման մեթոդներից է, որը նպատակահարմար է օգտագործել մտավոր սեփականության յուրաքանչյուր առանձին օբյեկտի արժեքը որոշելու համար, քանի որ այն թույլ է տալիս հաշվի առնել եզակի ՄՄՕ-ի առանձնահատկությունները՝ գնահատելով միայն այն ռիսկերը, որոնք իրականում նշանակալի են: Կումուլյատիվ կառուցման մոդելը հիմնված է եկամտաբերության ոչ ռիսկային տոկոսադրույքի (նորմայի) և ներդրումներ կատարելու համար ռիսկի հավելավճարների (պարգևի) միագումարման վրա: Մեթոդը լավագույնս կարող է հաշվի առնել ներդրումային բոլոր հնարավոր և ընտրանքային ռիսկերը, որոնք կապված են թե՛ արդյունաբերության, թե՛ տնտեսության ընդհանուր բնույթի գործոնների, և թե՛ կազմակերպության յուրահատկությունների հետ: Կումուլյատիվ կառուցման մոդելը բաղկացած է ոչ ռիսկային տոկոսադրույքի և պայմանականորեն նորմավորված բաղադրիչների հաջորդական ավելացումից, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են կազմակերպության գնահատվող մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը: Քննարկվող մոդելի կիրառման սկզբնական փուլում դիսկոնտավորման դրույքաչափը կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկելու համար ենթադրվում է հաշվի առնել ընտրանքային ռիսկի գործոններ [8]:

Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննության շրջանակներում կատարվող հետազոտության ընթացքում նաև կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի **փորձագիտական կամ մասնագիտական կարծիքը**, որը ձևավորվում ծրագրային ապահովման աուդիտի կամ վերլուծության արդյունքում՝ համապատասխան տեխնոլոգիական չափորոշիչների գնահատմամբ: Ստորև ներկայացվում է համակարգչային ծրագրերի արժեքի վրա ազդող հետևյալ տեխնոլոգիական չափորոշիչները.

– համակարգչային ծրագրի եզակիությունը և օգտագործման տնտեսական արդյունավետությունը (որոշվում է նույնատիպ ծրագրային ապահովման հետ համեմատական վերլուծություն կատարելու արդյունքում),

– համակարգչային ծրագրի սերտիֆիկացումը և լիցենզավորումը (օրինակ՝ ծրագիրը ներառված է էլեկտրոնային համակարգիչների և տվյալների բազաների միասնական ռեգիստրում, նաև իրականացվել է կամավոր սերտիֆիկացում),

– համակարգչային ծրագրի օգտագործման ոլորտները (օրինակ՝ գնահատվող ծրագիրը կարող է օգտագործվել միայն որոշակի ոլորտի ձեռնարկությունների համար կամ համընդհանուր է բոլոր ձեռնարկությունների համար՝ անկախ արդյունաբերության ճյուղից),

– փաստացի և կատարման ենթակա ծախսերի և եկամուտների ծավալը, կառուցվածքը (օրինակ՝ ծրագրային ապահովման մշակման, ձեռքբերման և տեղադրման արժեքը, ներառյալ՝ կատարված աշխատանքների գծով ծախսերը,

– համակարգչային ծրագրի պաշտպանության աստիճանը և օգտագործման ռիսկերը (լիցենզավորման կանոններին չհամապատասխանելը, տեղեկատվության կորուստը և արտահոսքը),

– համակարգչային ծրագրի ընթացիկ օգտագործման հնարավորությունները (օրինակ՝ որքան աշխատողներ կարող են այդ ծրագիրը միաժամանակյա օգտագործել):

– հաճախորդների շրջանակը, թիմի որակավորումը, ապրանքանիշի ճանաչելիությունը և այլն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի փորձագիտական կամ մասնագիտական կարծիքում արձանագրված առանձին չափորոշիչների վերլուծությամբ կարող են համադրվել համակարգչային ծրագրի օգտագործմամբ ապագա ժամանակահատվածում կանխատեսվող եկամուտների ձևավորման հնարավորությունները և կումուլյատիվ մեթոդի միջոցով համակարգված մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը (ընտրանքային ռիսկի գործոնները): Վերջնարդյունքում դուրս բերված զեղչման դրույքաչափը կարող է կիրառվել վերը ներկայացված թիվ 1 զեղչման բանաձևում՝ համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի ներկա արժեքը ստանալու համար:

Այսպիսով, վերը նշված մեթոդների համակցության միջոցով իրականացվող ոչ նյութական ակտիվի գնահատման դեպքում հաշվի են առնվում համակարգչային ծրագրի օգտագործմամբ ապագա ժամանակահատվածում կանխատեսվող եկամուտների ձևավորման հնարավորությունները և կումուլյատիվ մեթոդի միջոցով համակարգված մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը, ինչն առավելագույն կերպով է նեղացնում ոչ նյութական ակտիվի կողմից գեներացվող եկամուտների կանխատեսումները՝ նրա իրական արժեքին հանգելու հետ կապված հաշվարկներ կատարելիս:

Գրականության ցանկ

1. Reilly R.F., Schweihs R.P. Guide to Intangible asset valuation. 2nd Revised Edition. New York: Wiley, 2016. - 718 p.

2. «Ոչ նյութական ակտիվներ» Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 38. chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://anaudit.am/sites/default/files/%D5%80%D5%80%D5%84%D5%8D%2038%20%282018%29.pdf
3. ՀՀ կառավարության 24.08.2022թ.-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված Գնահատման ընդհանուր ստանդարտ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167982
4. Մամիկոնյան Կ.Հ. Փորձագիտություն և ակտիվների գնահատում /Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան - 2023. - 223 էջ:
5. Петрикова Е.М., Исаева Е.И., Овсянникова М.А. Методы оценки стоимости нематериальных активов, /Проблемы. мнения. Решения, – 2015. 2 (282). С. 35-46.
6. Азгальдов Г.Г., Карпова Н. Н. Оценка стоимости интеллектуальной собственности и нематериальных активов. М.: Международная академия оценки и консалтинга, 2006. 398 С.
7. Сорокина Е.М., Фадеева А.А., Оценка нематериальных активов в бухгалтерском учете, //Международный бухгалтерский учет. 2013. – 5 (251). С. 2-14.
8. Бричка Е.И., Методы определения ставки дисконтирования в оценке стоимости интеллектуальной собственности венчурного предприятия // Финансовая аналитика: проблемы и решения, 2014. – 28 (214). С.36-43.

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОПРЕДЕЛЕНИЯ СТОИМОСТИ КОМПЬЮТЕРНОГО ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ КАК НЕМАТЕРИАЛЬНОГО АКТИВА В РАМКАХ СУДЕБНО ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ

Мамиконян К.О. , Пилоян А.С.

Методика определения рыночной стоимости компьютерной программы как нематериального актива недостаточно широко представлена в соответствующих научно-методических разработках. В ходе проводимых с этой целью исследований возникает множество вопросов, которые в основном исходят из нематериальной природы данных активов.

В настоящей статье предложен методический подход к определению стоимости компьютерных программ при проведении судебных финансово-экономических экспертиз. Согласно предложенному методическому подходу, в случае выбора метода определения рыночной стоимости компьютерной программы следует, по всей видимости, рассматривать метод оценки «выигрыша в себестоимости», используемый в рамках доходного подхода, с последующим расчетом текущей стоимости будущего потока доходов, полученных от выигрыша в себестоимости, с помощью ставки дисконтирования, полученной кумулятивным методом.

В статье также обосновывается мысль о том, что в случае оценки нематериального актива, осуществляемой с помощью сочетания указанных методов, должны учитываться возможности получения прогнозируемых в будущем доходов с использованием компьютерной программы и риски, присущие объекту интеллектуальной собственности, систематизированные посредством кумулятивного метода, который максимально сужает спектр прогнозов доходов от нематериального актива при расчетах его справедливой стоимости.

Ключевые слова: *судебно-финансовая и экономическая экспертиза, нематериальный актив, компьютерная программа, дисконтирование, доходный подход, кумулятивный метод, выигрыш в себестоимости.*

METHODOLOGICAL ISSUES OF DETERMINING THE VALUE OF COMPUTER SOFTWARE AS AN INTANGIBLE ASSET WITHIN THE FRAMEWORK OF FORENSIC FINANCIAL AND ECONOMIC EXPERTISE

Mamikonyan K.H., Piloyan A.S.

The methodology for determining the market value of a computer program as an intangible asset is not widely presented in relevant scientific-methodological developments. In the course of research conducted for this purpose, many questions arise, which mainly stem from the intangible nature of these assets.

This article proposes a methodological approach to determining the value of computer programs within the framework of forensic financial and economic expertise. According to the proposed methodological approach, in the case of choosing a method for determining the market value of a computer program, the method of estimating the "profit in net cost" used within the framework of the income approach should be considered, and using a discount rate obtained by the cumulative method the present value of the future income stream obtained from the profit in cost should be calculated.

The article also substantiates the idea that in the case of an assessment of an intangible asset, carried out using a combination of these methods, the possibility of obtaining predictable future income using a computer program and the risks inherent in the intellectual property object, systematized through the cumulative method, which narrows the range of income forecasts from an intangible asset when calculating its fair value.

Keywords*: forensic financial and economic expertise, intangible asset, computer program, capital grows, discounting, income approach, cumulative method, profit in cost.*

Ներկայացվել է խմբագրության 12.04.2024
Ընդունվել է տպագրության 18.06.2024